Նա զՀայերն հերձուածող կոչէր,
Ի ամէն ազգաց բաժնած ասէր.
Պարոնտիրին հետըն շըշէր,
Ցոր տեղ նստէր՝ զՀայս հայհոյէր։
Լ֊ՀՀ կարգաւորքն երբ զնա տեսան՝
Մեծ որովայնին հաճեցան.
Ասին. "Ի Հայք չկայ քեզ նման.
Եկ դու ընդ մեզ լեր միաբան։"
Պատասխանեաց նա ամենին,
Թէ "Պարոնտէրն է իմ որդին.
Ես եմ գլուխ եւ մեծ՝ Հային,
Սա իմ օրհնածս է եւ չըթախ իմ։"
Իսկ Իլխանուն երիցանին՝
Որպէս ըզսուրբ զնա պաշտէին.
Ցեկեղեցիս շուրջ ածէին,
Ցընթերիս տարեալ մեծարէին։
Իշխանքն ալ զնա ի հաց տարին,
Եպիսկոպոսն ալ էլախին.
Ցետոյ տարին սեւ երեցնին
Ընքային առջեւ կացուցին։
Ա՛յլ եւ անդ զՀայս չարախօսեաց,
Եւ մեր Հաւատոյն շատ վատ ասաց.
Իսկ Թագաւորն եւ վէզիրնին
Թագուհին ալ զնա սիրեցին։
Ի Լոռի ալ զմեզ չարչարեց,
Անէծք բանադրանք մեզ ղրկեց.
Թ՛ եկէք յեկեղեցին մըտէք,
Ա՛ոաջնորդին ձեր լըսեցէք։
Բայց նըմա ոչ ոք հնազանդեց,
Եւ ոչ բանից նորա լըսեց.